ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ԸՆ ՔԱՀԱՆԱՅՍ

1830

տպ. Ց. Սիրապեան

Գ. Ցարֆա

67/40 m.

Ի ՏՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՊՈՍ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԳԷ ԿՈՍՏԱՆԴՆՈՒ ՊՕԼՍՈՅ

Ծանուցումն առ քահանայս ի վերայ խորհրդոյ սպասիսարութեան։

ՏՊԵԱԼ

1830 — ՌՄՀԹ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի Տպարանի Պողոսի արապեան ապուշ էֆէնդւոյ։

Շ ՐԹՈՒՆՔ քահանային զգուշացին գիտուէ • և օրէնս խնդրեացեն 'ի բերանոյ նը • զի հրեշտակ տն ամենակալի է • || Մաղաք • Բ • 7 •

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Յառաջնորդն կենաց Աստուծոյ բանիւ եղէ կիրկ մարգարէին զառաջնորդս Ժողովրդեան զգուշացուցանէ ասելով։ * Որդի մարդոյ, դէմ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի։ լուիցես յինէն զպատգամս՝ և սպառնասցես նոցա իբրև յինէն։ Եզ։ || Եզեկ։ Գ։ 17, 21։

Յառաջնորդք Ժողովրդեան անուանին ոչ միայն վեհագոյնք եպիսկոպոսունք, այլև Աստ խոստովանահայր քահանայք։ ուստի զայս վերոյգրեալ Աստուածական բան՝ իւրաքանչիւր խոստովանահայր քահանայ պարտի համարիլ վասն ինքեան ասացեալ։ և այնպէս արթնութիւն զգուշանալ՝ի վասն խոստովանորդուոց իւրոց, զի մի զարիւն նց՝ի ձեռաց խոստովանահօրն խնդրեսցէ Աստ։

Այս զգուշութիւն Թէպէտ՝ի վասն Աստ հոգևոր պաշտամանց պիտոյ է, բայց առաւելապէս՝ի վերայ խորհրդոյ ապաշխարութեան։ վասն զի զկնի մկրտութեան երկրորդ հնար յաւբայութիւն երկնից մնանելոյ՝ է խորհուրդն ապաշխարութեան։

Ուրեմն խոստովանահայր քահանայից յոյժ հարկաւոր է, նախ՝ ունիլ տեղեկութիւն՝ի վասն խորհրդոյ ապաշխարութեան։ և երկրորդ՝ օրինաւոր կերպիւ աւանդել խոստովանորդուոց զնոյն խորհուրդ։

Քահանայք են բժիշկ հոգ էոց։
խակ դեղ նոցա բանք Աստուծոյ։ ՊՍՂ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԴԱՆԵԼԻՑ ԽՈՐՀՐԴՈՅ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ։

ԳԼՈՒԽ Ա։

Ի վերայ սահմանի ապաշխարութեան։

Ապաշխարութիւնն սահմանի, *Խորհուրդ ի քեզ տնէ մերմէ սահմանեալ, որով զղջացեալ և խոստովանեալ մարդոյ թողեալ լիցի նին մեղք գործեալք յետ միրտուն թեն՝ իրաւաբանական արձակմամբ քահանային, դնելով ի վերայ զպատշաճաւոր վճարումն ||։

Այսի նախ, *Խորհուրդ ի քեզ տնէ մերմէ սահմանեալ ||։ զի որպէս զայլ խորհուրդս՝ նոյնպէս և զսորա

հուրդ ապաշխարութիւն քան տէր մեր սահմանեաց , տալով զեշխանութիւն ամ առաքելոց միանդամայն՝ յասելն ցնոսա . * Առէք հոգի սրբ . եթէ ումեք թողուցուք զմեղս , թողեալ լիցի նոցա . և եթէ զուրուք ունիցիք , կալեալ լիցի . ||յոհ . ի . 22։

Բայց որ մեր զայս խորհուրդ զառաջինն առաքելոց իւրոց աւանդեաց , և միջնորդութիւն նոցա իւրոքանչիւր վիճակաւոր եպիսկոպոսաց . նաև միջնորդութիւն նոցին աւանդէ իւրոքանչիւր քահանայից։

Այսր երկրորդ , * Որոյ զղջացեալ և խոստովանեալ մարդոյ թողեալ լինին մեղք գործելք յետ մկրտութեան || . զի որք յառաջն գործեցան , ոչ անկանին 'ի ներքոյ այսր դատաստանի . որովհետև եկեղեցին ոչ ումեք դատաստան առնէ , բայց միայն նմա՝ որ նախ ընդ դուռն մկրտութեան 'ի ներքս

մտեալ ելցէ։ քանզի ասէ առաքեալն։
* Զի կոյս իմ և զարթաքինան դա-
տելոյ։ || Ա Հոռնի։ Ե։ 12։ Ասէն զի
տելի է, զի Ամ մեղք եթէ՛ ներելիք
և եթէ՛ մահու չափք՝ թողեալ լինին
խորհրդով ապաշխարուն։ քանզի քա-
ոչ ինչ՚ի բաց առնու յասելն։ * Եթէ
ումեք թողուցուք զմեղս, թողեա՛լ
լիցի նոցա։ || Յոհ։ Ի։ 22։

Ասի երրորդ, * Խրատաբանական
սրձակմամբ քահանային || զի խոր-
հուրդն ապաշխարուն է դատաստան
հաշտեցուցիչ։ յորում խոստովանա-
հայր քահանայն ելբև դատաւոր՝
յետ տեսանելոյ զզղջումն մեղուցե-
լոյն, և լսելոյ զխոստովանութիւն,
նաև դնելոյ՚ի վերայ նոր զպատշաճա-
ւոր վճարումն, դատաւորաբար ար-
ձակէ զնա, և հաշտեցուցանէ ընդ այ։

Եւ յայսմ տարբերի հաշտեցու-
ցիչ դատաստանն՚ի վերէժինդիր դա-

տաստանէ . զի 'ի վերժինդէր դա-
տաստանի ոչ պահանջի պարտաւորին
խոստովանիլ զանօրէնութիւն իւր , և
ցաւելով խորհիլ յոյնց , և վճարել
զն նոցա . այլ բաւական է՝ թէ յայլմէ
ամբաստանեսցի , և արժանաւոր զը-
կայիւք պարտաւոր դատցի , և դա-
տաւորն վճռով իւրով որոշեսցէ
զարժանին պատիժ ։

Իսկ 'ի հաշտութեանդ դատաստանին
հարկ է պարտաւորին խոստովանիլ
զանձնէ՝ թէ ինչ անօրինեալ , և
տալ զանձնէ վկայութիւն՝ թէ ցաւի , և
պատրաստ լինել առ 'ի վճարել զա-
պաշխարանն՝ որ պահանջի ։

Պատուանք խորհրդոյ ապաշխա-
րութեան են երեք . Զղջումն , Խոս-
տովանութիւն , և Վճարումն ։
Երիկս առ Ջինքն են էական մասունք
նոր , իսկ երրորդն՝ ամբողջական .
զորոյ խօսեսցուք ուրոյն ուրոյն ։

Գ. Լ. Բ.

Ի վերայ ղղջման։

Զ ղջումն սահմանի, * Յաւ հոգւոյ և դարշումն ի դործեալ մեղաց՝ հանդերձ առաջադրութիւն ոչ և ևս մեղանչելոյ ||։

Այս յաւ պարտի ունել զՀինգ թէութիւն։ Այսինքն՝ զի լցի ներքին։ քանզի կոչի յաւ հոգւոյ՝ և ոչ մարմնոյ կամ զգայութիւն։

Երկրորդ՝ դեբբնական։ քանզի պարտի լինել ի հոգւոյն սրտի։ ապա մոլորին նոքա՝ որք իբրև կոչին յոյ յապաշխարութի, յապաղեն զայն։ ոմք թէ գլխովին յանձնիշխանութէ իւրեանց լցէ կամեալ ապաշաւելն։

Երրորդ՝ ընդհանուր։ այս է՝ առ ըստ ինքեալ առ ամ մեղս, գոնէ առ մնացեալս։ ուստի ապաշխարողն՝ որ յաւելցի վասն ամ մահուանի մեղաց

խրոց բաց 'ի միոյն, թերևս 'ի մա-
հուն մնայ վա՞ այնր միոյ մեղայ։

Զորրորդ՝ առաւել դարշել 'ի մե-
ղայ՝ քան յայլ ո՛և իցէ չարէ։

Լու հինգերորդ՝ լինել աղտու յա-
ռաջնում ներդործու�։ քանզի առ
ճշմարիտ զղջումն չէ բաւական սոսկ
կամեցողութիւն, այլ պահանջի դիտա-
ւորութիւն այնպիսի՝ որ զկամն որո-
շեսցէ առ 'ի հեղգել զարդելն, որ-
պիսի են մերձաւոր առիթք։ և ար-
մատախիլ առնել զախտակիր ունա-
կութիւնն, և որոնել ընտրել զմի-
նորդս, առանց որոց նոր վարքն՝ զոր
անձին առաջադրէ զղջացեալն, ո՛չ
մարթի պահպանիլ։

Լրկու է զղջումն, կատարեալ և
անկատար։ կատարեալն յառաջ գայ
'ի սիրոյն աստ։ իսկ անկատարն՝ 'ի կող-
մանէ դարշութեան մեղայ, կամ յեր-
կիւղէ դեհենին։

Գ. Լ. Գ.

Ի վերայ խոստովանութեան։

Խոստովանութիւնն սահմանի, *Ամբաստանութի մեղաց յետ միրը-տութեան գործելոց, արարեալ ա-պաշխարողի առաջի քահանայի՝ առ'ի ընդունել զարձակումն ||։

Խոստովանութիւն՝ հարկաւորութիւն մի նորդի հարկաւոր է 'ի փրկութի այնոցիկ՝ որք յետ մկրտութեան գթե-ցին. քանզի զայս բան են, *Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. և եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի նոցա. || Յոհ. Ի. 22. եկեղեցին միշտ իմացաւ և կալաւ, թէ մեղք մի ըստ միոջէ պարտին յայտնել յատենի ապաշխարութեան։

Ա՞ր զի քահանայք յանձանութս ոչ կարէին դատաստան առնել, և ոչ զարդարութի պահել'ի դնել զպա-

տիժս , եթէ ոչ մի բան միոջէ յայտ-
նէին ապաշխարողք զմեղս իւր-
եանց . ուստի ասէ ոսկեբերան .
* Օ ոչինչ յայնպանէ պարտէ թող-
ուլ՝ զոր ոչ քննեսցէ քաջ և ոչ խու-
զեսցէ եպիսկոպոսն կամ քահանայն :

Զինդ պայմանք խնդրին առ խոր-
հրդական խոստովանութիւն : Նախ՝
լինել մտադիր . այսինքն յառաջագոյն
քննել թէ զինչ գործեալ իցէ :

Երկրորդ՝ հաւատարիմ և շնչ-
ութիւն . որպէս զի ապաշխարօղն մի՝
յաւելցէ և մի նուազեցուսցէ զծան-
րութիւն և զթիւս մեղացն :

Երրորդ՝ ծածուկ . զի մի՝ դայ-
թակղեսցին տկարամիտք 'ի ժողովուրդ-
դոց՝ 'ի լսելն զմեղս խոստովանողին :

Չորրորդ՝ պատրաստ 'ի հնազան-
դիլ ապդեցութեանց և հրամանաց
խոստովանահօր :

Եւ հինգերորդ՝ ամբողջ . այս է՝

ուրոյն ուրոյն բացատրել նախ զտե-
սակս մեղաց , և ապա զպարադայս՝
ոչք զտեսակս փոխեն . այլ զմեղաս-
կիցն պարտ է լռել , և զնոր մեղան
միայն խոստովանիլ և ոչ զօտարին ։

Խնդրիցես . զբանս խորհրդական
խոստովանութիւն քահանայն կարի՞
արտաքոյ խօսել ։

Պատասխանեմ , ոչ երբէք , թէ և
'ի լռուէ նոր մեծ ինչ վնաս հետևէր ,
և կամ ինքն քահանայն չկարէր այլ-
ազգ խուսել 'ի մահուանէ ։

Խնդրիցես . ոյք փակին ընդ-
կնքով դաղտնութիւն ։

Պատասխանեմ , այն՝ ամ՝ որ 'ի
խորհրդական խոստովանութէ յայտ-
նեալ լինին . այսինքն է՝ ամենայն
մեղք եթէ ծանուցք և եթէ թե-
թևք , փորձութիւնք , տմարդի
բարք , բնական պակասութիւնք ,
և այլ որ ինչ միանգամ յայտնելովն

խորհուրդն բերէ ապաշխարողին։

Անդրիցես. երկու քահանայք՝ որք բազումանդամ լուեալ են զնաս տովանութիւն միոյ ուրուք, կարեն 'ի մէջ իւրեանց խօսել զմեղայ նորին՝ պատճառաւ խորհուրդ առնելոյ։

Պատասխանեմ, ոչ երբէք, բայց եթէ ազատ հաւանութիւն խոստովանողացն։

Դարձեալ անդրիցես. խոստովանահայրն ընդ ապաշխարողին կարէ՞ խօսել արտաքոյ խոստովանութեան 'ի վերայ ոչնչի՝ զորս յայտնեաց նա 'ի խոստովանութեան։

Պատասխանեմ, ոչ, բայց եթէ նախ հրաման ընկալեալ 'ի նմանէ. զի այս եղանակ խօսելոյ ծանր է ապաշխարողաց։ Արտաքոյ. քանզի 'ի խոստովանութեան կարող է խոստովանահայրն և պարտական իսկ՝ երբեմն ազդ առնել խոստո-

վանորդաց սահելոյ 'ի նոյն մեղ, զի առաւել զգուշացի անձին։

Գ Լ. Դ։

'Ի վերայ վճարման։

Ա Հարամն սահմանի, * Յանձնառուն պատժոց եղեալոց 'ի խոստովանահօրէն, և կամաւոր վշտամբերութիւն առ 'ի փոխարինութիւն անիրաւութեան՝ զոր արար ՝՝։ Իսկ խոստովանահայրն 'ի դնելն զապաշխարանս պարտի նկատել զերկուս. մի՝ զպատիժ մեղուցելոյն. և միւս՝ զնպաստաւորութիւն նորա, զի մի՝ միւսանգամ գլորեսցի։

Ասդրիցես. զվճարումն եղեալ 'ի մոց խոստովանահօրէ՝ կարէ՞ փոխել այլ քահանայ։

Պատասխանեմ, ո՛չ, բայց եթէ

ապաշխարանքն չէին ուսուցանում, կամ եթէ յանկարծ ադէպ պարագայ մը՝ ինչ՝ ի վեր եկեսցէ, յայնժամ կարէ փոխել այլ քահանայ՝ ըստ ըստ զնոցն մեղանչի խորհրդական խոստովանութեան։

Խնդրիցես։ վճարումն որոնք լինի։

Պատասխանեմ, երիւք՝ որք են Աղօթք, Պահք և Ողորմութիւն։ այլ զայսմանէ լուիցես և՝ ի ստորև։

Գ. Լ.

Ի՞նչ վերաբերեալ հոգեւոր խորհրդոյ ապաշխարութեան։

Երիւք խորհրդոյ ապաշխարութեան են՝ զղջումն, խոստովանութիւն, և վճարումն։ Արդեաւ առաջինքն՝ ոչ սաստիկապէս, են էական մասունք խորհրդոյս։ իսկ երրորդն է ամբողջական

մասն նը՝ և ոչ էական։ Ա՛ն զի ածկարէ այնպէս ընդունել՝ ի հնորհս իւր զզղջացեալն, մինչև ոչ պահանջել՝ ի նմանէ զվճարումն ինչ։ Վասն որոյ հոգեվարաց և՝ ի գործադրուէ բանի պակասեալ ապաշխարողաց ստուեալ լինի արձակումն՝ առանց դնելոյ զվճարումն ինչ՝ ի վրա։

Զև խորհրդոյ ապաշխարութիւն է այս բան՝ զոր ասէ քահանայն։ *Ա՛ր ձակեմ զքեզ յամ մասնակցութենէ մեղաց ||։

Խնդրիցես։ քահանայն որոշ պարտի զանազանել զարձակումն։

Պատասխանեմ, վեց տեսակ մարդկան։ Նախ՝ որք թշնամութիւ վարին ընդ եղբօր, և ոչ կամին հաշտել ընդ նմա՝ զատելութենն՝ ի բաց թողեալ, և ոչ անկեղծ սիրաւ դնալ ընդ նմա։

Երկրորդ՝ որք ունելով ժամանակ՝ զպարտս իւրեանց ոչ տան։

կամ ՝ի մաքրեն զանուն ընկերին՝ զոր ինքեանք վատահամբաւեալ են։

Լ. որորդ՝ որք աւելորդ ծախիւք պարտս դիցեն, զորս վճարել չեն ձեռնհաս. կամ եթէ իցեն՝ զանց առնեն. յորմէ պարտատերքն՝ արուեստաւորքն՝ և վաճառականք մեծամեծ վնասս կրեն։

Ղ. որորդ՝ որք ՝ի դուռն ածեն զանարժան և զարդեղեալ արուեստս. որպիսի են վաշխառուք, և դրամով խաղացողք, և այլն. և կամ օրինաւոր արուեստիւք վարին առանարժանս. որպիսի են այն պատկերահանք՝ որք զանպարկեշտս նկարեն. և դրամագլուխք՝ որք վաճառեն զդիրս գրգռիչս ՝ի ցանկութիւն։

Հ. ինգերորդ՝ որք շրջին ՝ի մերձաւոր որոդայթս մեղանչելոյ, և ՝ի կամին զգուշանալ ՝ի պատճառաց և յառթից մեղաց։

Լու վեցերորդ՝ որք մեղադրելի ան հոգուբ ոչ գիտեն զսկզբունս հաւատոյ. զոր օրինակի՝ զիսորհուրդ մեռանոբ երրորդութիւն, և մարդեղութիւն բանին աստ, նաև զայլ հոգևոր գիտելիս վերաբերեալս առքրիստոնէութիւն։

ԳԼ. Ը.

Ի վերայ պաշտօնէի խորհրդոյ ապաշխարութեան։

Պաշտօնեայ խորհրդոյ ապաշխարութիւն են եպիսկոպոսունք կամ քահանայք. զի առնն և եթ ասացաւ. * Լուիր ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. և եթէ զուրուք ումիցիք, կալեալ լիցի նոցա։ || Յոհ. Ի. 22։

Խնդրեցես. եամ քահանայք կարէն լսել զխոստովանութի և արձակել։

Պատասխանեմ, ոչ. զի թէպէտ եամ քահանայք ունին 'ի ձեռնադրութէն զիշխանութի կապելոյ և արձակելոյ, բայց որ կարդէ 'ի խոստովանահայրութի՝ պարտի ունել 'ի ձեռս իւր վա՛ խոստովանահայր լինելոյ իւրոյ յատուկ հրամանադիր յեպիսկոպոսէ վիճակին. ապա թէ ոչ՝ չէ՛ նմա արժան լսել զխոստովանութի, և արձակել զոք, բայց եթէ 'ի վանդէ մահու։ Այս զմի օրինակ՝ եամ վարդապետք թէպէտ ունին իշխանութի քարոզելոյ, սակայն առանց հրամանի առաջնորդի վիճակին ոչ քարոզեն. քան այսմ պարտ է լինիլ և քահանայից։

Խնդրեցես. քահանայ՝ որ ունի հրամանադիր 'ի ձեռին, կարէ՞ անխտրաբար լսել զխոստովանութի ո՞ և

ելցէ մարդոյ որ է խոստովանողդէ այլոյ խոստովանահայր քահանայի, և արձակէլ զնա 'ի մեղաց։

Պատասխանեմ, ուշ։ այլ միայն կա՞ր է լսել զխոստովանութիւն սեփական ժողովրդոյ իւրոյ, և նոցա տալ զար ձակումն։ բայց 'ի ծանր հիւանդաց՝ որոց ժամանակն չնեղէ կոչել զսեփական քահանայն։ և բայց 'ի յօտարականաց՝ որոց խոստովանահայրն է յերկիր հեռաւոր։

Գ. Լ.։

'Ի վերայ գործոյ խորհրդոյ ապաշխարութեան։

Ընդ ինչ ունի գործք խորհրդոյ ապաշխարութիւն։ Նախ՝ թողութիւն մեղաց։ Երկրորդ՝ թողութիւն յաւիտենական պատժոց։ Երրորդ՝ նորոգումն բարեկամութիւն ընդ աստ։ Չորրորդ՝ հերետիկական նպատակ։

որով արդարացեալ մեղաւորն կարաս ցէ այնուհետև խորշել 'ի մեղաց, և յարատևել 'ի բարին։ Եւ հինգերորդ՝ վերատին կենդանութի աւաքինութեց և արդեանց կորուսելոց մեղք։

Խնդրեցես. ոչ ապաշխարութիւն կենդանանան առաջին բարեգործութիւք մահացեալք մեղք, նոյնպես և մեղանչելովն կենդանանան արդեաք մեղք յառաջադոյն քաւեալք։

Պատասխանեմ, ո՛չ կենդանանան մեղք՝ որք յառաջադոյն քաւեցան ապաշխարութիւ։ Եւ այս իրաւունք են յԱծային դատաստանի. այլ ո՛չ այսպէս է 'ի մարդկային դատաստանի. զի դոյն միանգամ պատժեալ՝ եթէ յաւելցի դողանալ, չարաչար դատի, և խեղդանամ կորնչի։

'Ի վերջոյ այս ևս դիտելի լեցի, զի թէպէտ իւրաքանչիւր խորհուրդք

նաբ եկեղեցւոյ ունին ինքեանց յար մար զանազան ընթերցմունս , սա կայն դիտաւորութիւն կատարին։ Եթէ ընթերցմունք լինիցին , և դիտաւորութիւն ոչ , այն ընթերցմունք համարին մարմին անհոգի։

Ուստի և խոստովանահայր քահանային հարկ է 'ի տալն զարձակումն ունել զդիտաւորութիւն զայս , թէ յորժամ ածային բանիւն արձակեմ ես զայս խոստովանորդի 'ի վերերկրի, նոյնժամայն արձակի սա նաև յերկինս . զի այս է ասելն քի , թէ * Զ որ արձակեսցէս յերկրի, եղիցի արձակեալ յերկինս . ‖ Մատ. ԺՁ. 19։

Յետ այսր համառօտ տեղեկութեան 'ի վերս խորհրդոյ ապաշխարութեան , զոր պարտին խոստովանահայր քահանայքն հարկիս ունել , պէտք են նոցա նաև դիտել զկերպ օրինապէս աւանդելոյ զնոյն խոստովանորդւոյ , թէ 'ի

հարցանելն զպարտուցս մեղաց, և թէ՝ ի դնելն զյարմար առաշխարհանս։

Գ. Լ.։

Օ. Գոլանքեր՝ ի հարցանելն զպարտուցս մեղաց։

Լուսաւորչանահայրն քահանայ՝ որ հանդերձեալ է լսել զխոստովանութիւնս, պարտաւորի զի ինքն նոցն յառաջագոյն խոստովանեալ և արձակեալ։ վասն զի կապեալ ոք ոչ կարէ արձակել զայլ կապեալ։ այլ՝ ի հարկաւորութենէ պահու ՝ուծ դներեալցէ։ Ուստի քահանայքն թէպէտ յամենայն մանաւանդ պարտին պարտաւոր լինել, բայց առաւելապէս՝ ի մասնաւորաբերեն զխորհուրդս ՝նոր եկեղեցւոյ։ * Ինժիլի՝ բժշկութեան զանձն քո։ || ղ-ի։ ՝ղ։ 23։

Ընդ այսմ է խոստովանաՀայր քահանային առաւել զգուշանալ յերիս. նախ՝ զի 'ի լսելն զխոստովանութիւն ուրուք՝ խօսել տացէ նմա և զկարևոր պարագայս մեղացն. քանզի ըստ պարագայիցն յաւէտ կամ նուազ ծանրանան մեղք, և մերթ փոխեն և զառեսակն։ Օրինակ օրէ նակ Հարկանելն է մեղք բարկութիւն. այլ եթէ Հարցէ ոք զկին յրի, Հնար է բարկութեն փոխել 'ի մարդասպանութիւն. ուստի 'ի մէջ խոստովանութեան Հարկաւոր է լսել զպարագայսն, զի ըստ այնմ պատրաստեսցէ զդեղն։

Կարևոր պարագայք մեղաց են այսոքիկ։ «Այսինքն՝ ոմն և ոմն ոք էցէ գործողն, երիտասարդ եթէ ծեր. տղէմ եթէ խնամատուն. զի մի և նոյն մեղք զանազան ծանրութիւն ունի 'ի վերայ երիտասարդի կամ ծերոյ, և 'ի վերայ տղիտի կամ խնամատարի։

Երկրորդ՝ զինչ էցէ գործեալ մեղքն, և որ տեսակ ներ. զոր օրինակ՝ եթէ գողութի՞ էցէ, արդեաք ինչք աղքատի՞ էցեն գողօնքն, եթէ հարբուսի. կամ մարդոյ ուրուք, եթէ եկեղեցւոյ. և այս վերջինս փոխի յայլ ծանրագոյն մեղս, որ կոչի սեղանակապտութիւն։

Երրորդ՝ որ էցէ գործեալ. քանզի զանազանութի՞ մեծ է գործել զմի և նոյն մեղս ՚ի հասարակ կամ ՚ի սբ տեղիս։

Չորրորդ՝ երբ էցէ գործեալ. ՚ի հասարակ աւուրս, եթէ ՚ի կիւրակէս, կամ յաւուրս պահոց։

Հինգերորդ՝ քանիցս գործեալ էցէ ոք զմի և նոյն մեղս. քանզի ոչքան կրկնին մեղք, այնքան ծանրանան, և առաւելուն չարութիւն։

Եւ վեցերորդ՝ ընդ որպիսի անձինս գործեալ էցէ. ընդ օտար

ազգին, եթէ ընդ համազգիս. կամ
'ի համազգեաց անսկ ընդ օտարս,
եթէ ընդ ազգականս. միայն թէ՝ չէ
օրէն հարցանել զյատուկ անձն ընդ
որում գործեալ իցէ։ Իսկ եթէ
խոստովանողին պարզմտութիւն սկսա-
նիցի ասել, պարտ է լռեցուցանել
զնա. քանզի այն ոչ լինի խոստո-
վանութիւն՝ այլ մատնութիւն։

Երիցորդ՝ խոստովանահայրն պար-
տի խոհեմութիւն վարել 'ի հարցանելն.
թէպէտ հարցանելն չէ պաշտօն խոս-
տովանահօր՝ այլ միայն լսելն. բայց
եթէ խոստովանողին սկսրանայ ու-
սել վն տգիտութիւն կամ անօթեւանութիւն
և խնամատութիւն արժան է հար-
ցանել. զի մի՝ պահելով զմեղսն՝ խոս-
տովանութիւնն ունայնասցի, և
եղիցի սրբապղծութիւն։

Պատի զգուշութիւն և խնամատութիւն.
քանզի նկատելի է 'ի հասակ խոստո-

վանողին, 'ի վիճակ կացուցեալ նը, և յայլ թէուրթիս։ Ա. յս զգուշութիւն առաւելապէս եղիցի 'ի խոստովանութիւս մանկանց. զի մի՛ յանխոհեմ հարցաքննութէ մեղս ուսանիցին անմեղք։

Երրորդ՝ մեծի խոհեմութէ պէտք են խոստովանահօր 'ի դնելն զապաշխարանս, զի յարմար լիցի խոստովանեալ մեղացն։ Բժիշկ զի եթէ ոչ տացէ դեղ յարմարաւոր հիւանդութէ, փոխանակ բժշկելոյ ծանր բացուցանէ զհիւանդն, երբեմն և սպանանէ. ուստի մեծ զգուշութիւն պարտի ունել խոստովանահայրն 'ի դնելն զապաշխարանս։ Ա. յս զգուշութիւն ոչ փակի ընդ մանաւոր կանոնաց. այլ յանձն եղեալ է 'ի խոհեմութի և 'ի դիտութի խոստովանահօր։ Զ. այսմանէ 'ի հասարակի խօսեցուք աստանօր համառօտիւ։

Գ. Լ. · Ամ։

Օ՝ Հոս-ըսիեանք ՝ի դնելն զշարմար ապաշ
խարհանս։

Յայտ է՝ թէ ամ մեղք են ընդ
դէմ այ. բայց և ասի, թէ են մեղք՝
զոր զանձ վշտացուցանեն. են՝ զոր
զգարծոյն. և են՝ զոր զընկերն. զոր
օրինակ՝ մեղքն Հպարտութիւն զանձ վշտա
ցուցանէ, մեղքն բղջախոհութիւն՝ զգարծ
ծոյն, և մեղքն ագահութիւն՝ զընկերն։
Ուստի Հպարտութիւն ապաշխարանք
են խոնարհական աղօթք, բղջախո-
հութեան՝ պահք կամ ծոմապա-
հութիւն, և ագահութիւն՝ ողորմութիւն
առ կարօտեալս։

Մեղանչումն առ ընկերս՝ կարէ
լինել զանազան կերպիւ. կամ բար-
կութիւն զանգամ եղբօր վիրաւորելով.
որոյ դեղն է հաշտութիւն մերոյին։
Կամ զրպարտութիւն զանուն ընկերոյն
արատաւորելով. որոյ դեղն է մոքրել

զանուն եղբօրն. իբր զի առ որս խօ-
սեցաւ զզրպարտութիւն՝ դարձեալ
խօսեցի զստուգութիւն, թէ այն
եղբայրն անմեղ էր՝ ես զրպարտուի
արարի զնմանէ։ Այս կամ զինչս եղ
բօրն յափշտակելով, գողանալով, և
այլ ոչ և իցէ կերպիւ ինչս տալով. ո-
րոյ դեղէ վճարել զինեան արար-
եալ. և եթէ ունիցի կարողութիւն
վասն անիրաւութեան տալ ողորմութի
աղքատաց. իսկ եթէ ոչ՝ զայլ յար-
մար ապաշխարանս կրել։

Բայց ընդհանուր ապաշխարանք
այս լիցի, զի զոր միանգամ դար-
ձեալ՝ մի՛ այլ ևս գործեսցէ, և՝ ի
պատճառացն ևս հեռասցի։ Զ՝որ օրի
նակ եթէ պատճառ կռուոյ կամ
հայհոյութիւն՝ արբենալն լիցէ, զինի
և օղի ամենևին մի՛ առցէ՝ ի բերան.
եթէ վատաբարձութեան պատճառ՝ լիցէ
մատնելն յայս ինչ տուն, կամ տեսուն

առնելն է այն ինչ մարդոյ՝ ամենևին մի՛ մոցէ և մի՛ տեսուլ արասցէ։

Աշաւելապէս ապաշխարանք մանկանց և պատանեաց եղիցի, ըստ ամի հեռանալ՝ի չար ընկերաց։ Ապաշխարանք կատարելոց՝ խնամածու լինել ընտանեաց իւրեանց, առաքել զմանկունս՝ի վարժարան, և չհանել անտի յառաջքան զուսանիլն զկարդալ և զգրել։ Ապաշխարանք կանանց՝ պարկեշտ հնազանդ և տնարար լինել. և առ հասարակ՝ամ անձանց՝ եղբայրասէր, աղքատասէր, և ընդ ամենեսին հաշտ և խաղաղ լինել, մանաւանդ ընդ հայրենի աղգին իւրում։

Այն ոմանք՝ որք ո՛չ գիտեն զՀայր մեր, ապաշխարանք դիցի նոցա՝ զի ուսանիցին ուղիղ. են և՝ որք ո՛չ գիտեն զկերպ ուղիղ խաչակնքելոյ, խոստովանահարք զձեռանէ նոցա կալել ուսուցեն նոցա ուղիղ խաչակնքել։

«Զմանուկն ապաշխարանք դիցեն նոցա՝ զի զկարելոյ աղօթս և արարողութիւնս ուսանիցին. իսկ զկարելոյ աղօթքն են սոքին. Հայր մեր. Հաւատամքն՝ ի մի ՝ած. Ողորմեցարուք ասելի քո. Հաւատով խոստովանիմ. ապաքէն Հարկ է քրիստոնէից գոնէ զայսոսիկ սերմանել՝ ի բերան։

Իսկ Հարկաւոր արարողութիւնքն են սոքին. ուղիղ խաչակնքել՝ ի դէմն, յարմար ձևով ծնրադրութիւն առնել, ՝ի ժամ երբ պատարագի և կամ յընթերցման երբ աւետարանի՝ յոտին կալ բացաւ գլխով, և՝ ի նստելն՝ ՝ի ծունկս անկանել. և ս և՝ բարձր ձայնիւ չաղօթել, չՀայել յոյսկոյս կամ յոյնկոյս, ընդ այլոց չխօսել, զերբ պատարագն ամբողջ տեսանել։

«Ոչնոսէս և արտաքոյ եկեղեցւոյ յաստ տեղիս զքրիստոնէականս պարկեշտութիւն ունել, ամենևին զգուշ

շանալ լեզուի և բերանոյ՝ առ՝ի
հայհոյել և հերդնուլ։ Օ՛ի ոչ զան
դակն՝ ի ձայնէն Ճանաչի, նոյնպէս
և քրիստոնեայն՝ ի վարուց՝ առաւել
ևս՝ ի բանէն։ ուստի որ խօսի զհայ
հոյուն կամ երդնու՝ ի մեռելս՝ էն
արժան կոչիլ նա քրիստոնեայ։ զայս
ամ և առաւել քան զասին՝ պար՝
տին խոստովանահարք ապաշխա՝
րանս դնել՝ ի վրայ խոստովանողաց
ըստ վայելչութեան։

Քահանայք ոմանք՝ ի դնելն զա՝
պաշխարանս ոչ ծուլանան, քառասանից՝
ժամուց՝ կամ ապաշաւոց յիշելով՝ բամ՝
բասեալ լինելին յառաջագոյն, ոչ
և լսելի եղեալ է։ և զայս բամբա՝
սանք՝ գուցէ ոմանք յաշխարհակա՝
նաց էապիազանցութիւն առ հանօրէն
քահանայս վերաբերեն։ ուրեմն
մեծ զգուշութի պարտ է ունել խոս՝
տովանահարց՝ էառնուլ՝ ի բերան

զայսպիսի անուանս , այլ միայն զաղ
քատան յիշել . ոչ զի բարեպաշտ ժո
ղովուրդք՝ յինքեանց յորդորեսցին
նուէրս տալ կարդաւորաց . որով
կատարի հրամանն քո թէ . * Զրի՛
առէք՝ և ձրի՛ տուք . || Մատթ . Ժ . 8 ։

Լ՚ՍՐԴ՝ զայս հանառօտ տեղեկութի
՚ի վերայ սրբարար խորհրդոյ ապաշխա
րութեան՝ եթէ սերմն բարի սերմա
նեցաք ՚ի լսելիս բարեկրօն քահա
նայիցդ . այլ ոչ աճեցուսցէ հար
իւրապատիկ և հազարապատիկ ա
ռատութիւն՝ ցօղելով ՚ի վերայ ձեր զհոսանս
շնորհաց և գիտութեան , և կարողացուս
ցէ զձեզ ՚ի գերադոյն պաշտամանդ՝
զի առնելով և ուսուցանելով մեծ
կոչմանէք յարքայութեան երկնից . ո
րում զմեզ և զամ հաւատացեալ ան
ուան իւրոյ արժանիս արասցէ բա
րերար մարդասէր և ողորմածն աստ .
ամէն ։

Թ. Ա.
№ 6714

ՏՊԵՐԱԼ

1830 — ԱՄՍԹ

ՅՕՐԹԱԳԻՒՂ